

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2012-2013 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստերի առաջադրանքները կազմված են հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

### ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

#### 1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են երեք ձևով՝ ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխան պահանջող:

Ընտրովի պատասխանով առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանները կարող են լինել՝

- թվային արժեք,
- բանաձև կամ որևէ մեծության չափման միավոր,
- բառ, բառաշարք կամ բառակապակցություն,
- առաջադրանքի տարրերը համարակալող թվերի կամ տառերի դասավորություն, համապատասխանություն:

Յուրաքանչյուր առաջադրանքի պատասխանի թվային արժեքը՝ չափման միավորով, պետք է գրել պատասխանի ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օրինակ՝ 45 կգ, 21 մ/վ և այլն):

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված գրառել առաջադրանքի պահանջը, ներկայացնել կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով):

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-30	8
Ընդարձակ պատասխանով	31-35	5

## 2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Ք/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>35</b>

## 3. Ցուցումներ

- ա) Կարճ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների պատասխանները, եթե առաջադրանքում չկա լրացուցիչ ցուցում, **պետք է բերված լինեն ՄՅ միավորների:**
- բ) Ընդարձակ պատասխանով առաջադրանքների (31-35-րդ) յուրաքանչյուր ենթաառաջադրանքի ճիշտ կատարման համար տրվում է 1 միավոր (առանց խնդրի լուծման ողջ ընթացքը ներկայացնելու, **միայն վերջնական պատասխանի գրառման համար միավոր չի տրվում):**
- գ) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել.  $\pi = 3,14$ ;  $\pi^2 = 10$ ;  $\sqrt{2} = 1,4$ ;  $\sqrt{3} = 1,7$ , իսկ  $g = 10$  Ն/կգ:
- դ) 24-րդ առաջադրանքը կատարելիս պատասխանների ձևաթղթում առաջադրանքի համարի մոտ տրված աղյուսակի համապատասխան վանդակներում որպես պատասխան պետք է գրառել ընտրված հասկացությունների միայն համարները:

### Օրինակ՝

24

Ստեղծի՛ր համապատասխանություն ֆիզիկական մեծության և այն հաշվելու արտահայտության միջև:

- |                        |          |
|------------------------|----------|
| Ա) Ծանրության ուժ      | 1. $A/t$ |
| Բ) Առաձգականության ուժ | 2. $kx$  |
|                        | 3. $mg$  |

Պատ՝

Ա)	Բ)
3	2